


ԱՔԱՌԵՍՏԳԻՏԵԱԿԱՆ

ԵԶՐԱՅԻՆ ՄԵՆՈՒՆԵՐՈՐ ԳԻՏԵՐ «ԱԼԷՄԵՆ», ՍՂՈՍԵԼՈՐ ՄԵՔԵՆԱՆ

Ցակաւին սղոցելու մեքենաներէն եւ ոչ մին, որչափնորոգուած ու ճշգրտուած ալ ըլլայ, կրցած է այն աւտիճանի տարածուիլ ու Գործածուիլ, որ ամէն կողմանէ այսպիսի մեքենայի մը համար զգացուած պէտքերն համապատասխանէ: Պատճառն յայտնի է. ցայժմ հնարուածներն իրենց բազմաթիւ մասունքներէ բաղկացեալ



Տիպ Ա.:

Սղոց Ա. տիպի:


կազմութեան պատճառաւ, մեքենային վրայ աշխատողին ճարտարութիւնը կ'ենթադրեն եւ մէկալ կողմանէ այնչափ գործելու յարմար ու աշխատանքն ընդ յայտն զգալի պակասը լինի զարմանելու համար՝ ազգային մը (կարենցի) իւր հանձարը գործածած է թէ հայ ազգին եւ թէ իրեն մշտնջենաւոր պատիւ բերող իւր անուամբ ԱԼԷՄԵՆ յորըմբուած սղոցելու մեքենան հնարուած: — Մինչեւ հիմայ գոյութիւն ունեցող իւր մեքենաներուն 10 օրուան մէջ աւարտածը՝ Պր. Տիգրան Ալէմանին հնարած մեքենան 1 օրուան մէջ կը լինցընէ: Նոյն համեմատութեամբ է նաեւ գինը. նոյնազգի ամենէն կատարեալ մեքենայի մը 100 ֆրանկի կատարած

գործը՝ «Ալէման» մեքենան 20—30 ֆրանկով կ'ընէ, հանդերձ անհամեմատ կերպով աւելի մաքուր, բարակ գործուած եւն առաւելութիւններով: Հնարագէտ Պարոնը արդէն բոլոր քաղաքականացեալ տերութեանց մէջ իւր սղոցելու մեքենային համար Patent առած է:

«Ալէման» սղոցելու մեքենան ցայժմ հնարուած նոյնազգի մեքենաներն այնու կը գերազանցէ, որ պարզ ու հասաւորուն կազմութիւն մ'ունի, գործածութեան յարմար, գործք տեսնող ու աշխատանքն եւ շատ ժամանակի կորուստ չի պատճառներ, այնպէս որ ամենայն իրաւամբ փայտաբանդակի, հիւնութեան, նախորինակ պատարտեալու եւ մետաղաբանդակի արուեստից ու ճարտարութեանց համար սղոցելու մեքենայի մը գաղափարականը (ideal) կրնայ համարուիլ:



Սղոց Բ. տիպի:



Տիպ Բ.:

Նորագիւտ մեքենան՝ որ թէ շիտակ կտրելու եւ թէ զանազան զարդաձեւեր փորելու հանելու կը գործածուի, ամենեւին ժամանակ վատնող ու առաւելելի վատտակ չի պահանջեր, ինչու որ սղոցը միայն մէկ կողմէն պահուած է, իսկ մէկալ կողմը դիւրաւ իւր ուղղիչներուն մէջ կը մտնէ, այնպէս որ ասով այն առարկան՝ որուն վրայ կը գործէ, չի կրնար պատուել կամ կտրել: Տիպ Ա.՝ կոկիկ կերպով կը կտրէ հետեւեալ առարկաները. 1 միակ կամ բազմապատիկ թուղթ, 2. որ եւ իցէ մինչեւ 15mm

պնդութեամբ վրայէ վրայ գրուած խաւարարտ, 3. կակուղ կամ կարծր կաշի ուղուած հաստութեամբ, 4. միակ կամ բազմապատիկ վրայէ վրայ գրուած նիւթեր կամ ասուի, 5. ամէն տեսակ փայտ, դրուագ եւն 1—15mm հաստութեամբ եւ վերջնապէս 6. մետաղի թիթեղ կամ տախտակ մինչեւ 10mm հաստութեամբ:

— Ունի գործնական կերպով հաստատուած Գոյնի մը, որուն պաշտօնն է վրան գործուելի առարկային վրայ ծակ մը բանալ, որպէս զի յետոյ սղոցը նոյն ծակին մէջ մանելով կարենայ առարկան կտրել, որ եթէ գծագրուած է՝ նոյն գծերուն վրայէն ձեւը կտրել հասնել: Գարձեալ ինքնաբարան մը (Blasevorrichtung) որ սղոցածը հեռացնելու համար է, որով աշխատողը անդադար փչելու պէտք չ'ունենար: Բաց աստի մընելու անոյն վրայ կը գտնուի յղկիչ ճախարակ մը, որ արագ արագ կրնայ դարձուիլ եւ որուն միջոցաւ լնցած աշխատութիւնը կրնայ ողորկուիլ կամ յղկիչ թղթով յղկուիլ:

Տիպ Բ. ք սիպ Ա. յն կազմութիւնն ունի, կրնայ ըստ պիտոյից ու պարագայից ոտքով, ձեռքով կամ շարժիչով (Motor) գործել եւ վերոյիշեալ ամէն նիւթերը մինչեւ 100mm հաստութեամբ կտրել: Տիպ Ա. յն ամէն մասունքներն ասիկա ալ ունի եւ ոչ միայն զանազան զարդաձեւեր կը կտրէ, այլ թէ՛ երկայնութեան եւ թէ՛ լայնութեան կտրող սղոցներու պաշտօնն ալ կը կատարէ առանձինն:

Վերոյիշեալներէն զատ հնարած է Պ. Այէմեան նաեւ տիպ Գ. մեքենայ մը, որ գերան կտրող սղոցներու տեղ լի ու լի կը բռնէ: Այս մեքենան ասոնց պէս գերանէ մը մէկ անգամէն ուղուած թուով կրնայ տախտակ հանել, բայց անոնց վրայ այս առաւելութիւնն ունի, որ գերանին որ եւ իցէ կողմէն կրնայ իւր գայլիկնինն օգնութեամբ սկսիլ, այնպէս որ արդէն մեծաւ մասամբ տախտակի վերածուած գերանը երկու ծայրերէն կրնայ առանց կտրուելու մնալ:

Հնարագէտ Պ. Այէմեանին մարդկութեան յառաջագիտութեան համար այս ինստ օգտաւէտ

նպաստը շնորհաւորելով՝ սրտանց յարգութիւն կը մաղթենք իւր գիւտը ընդհանրացնելու եւ իւր մօտգրած միւս ծրագրներն ու գիւտերն ալ փութով մարդկութեան մատչելի ընելու:



ԲՈՎԱՆԴԱԳՈՒԹԻՒՆ

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ — Արշակունի զրամներ. — Նախարարականից եւ հազարն արշակունից եւ իրենց ծանօթ զրամները. 225:

ՄԱՏՆԻԱԳՐԱԿԱՆ — Մեծն Տրդատ. 234:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ — Հայերէնագէտն Շմիթ + (պատկերազարդ). 241:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ — Արաքիցի մատենագրեր Հայաստանի մասին. 244: — Հին հայոց տեղոյ անունները. 245:

ԼԵՋՈՒԱՐԱՄԱԿԱՆ — Ստուգաբանական հետազոտութիւնը. 253: — Բմականներու կոկորդական մասը. 254:

ՄԱՏՆԻԱԳՐԱԿԱՆ — Das armenische Himmarnium. Studien zu seiner geschichtlichen Entwicklung. 254:

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

ԱԶԳԱՐԱԿԱՆ — Դրանսիլուանիայի ազգային ուսնուագար՝ գերդաստաններուն անունները. — Գարաշոնեանց զինանշանը (պատկերազարդ). 257:

ՄԱՏՆԻԱԳՐԱԿԱՆ — Յուցակ ձեռագրաց Թաւրիզի. — Ա. Յուցակ ձեռագրաց մատենադարանին Ղալայի կամ Բերդաթալի. 265:

ԼԵՋՈՒԱՐԱՄԱԿԱՆ — Հայերէն եւ զրացի լեզուները. Ա. Հայերէնի ձայնական գրութեան մասին նախակարգ զետեղութիւններ. 276:

ԸՆԴԴԻՄԱՐԱՄԱԿԱՆ — Անապակ պատարագի խնդրը. 281: — Բարտիք ու Կաղամախին. 285:

ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

Ազգայնոյ մը Նշանաւոր գիտը «Ալեման» սղոցելու մեքենայ (պատկերազարդ). 287:



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆԱՏՈՒ ԽՄԱՐԱԳՐ

Հ. ԲԱՓԱՏԷԼ Կ. ՊԱՐԱՆՉ

Վ Ի Ե Ն Ե, Մ Ի Ե Բ Ո Ր Ի Ա Ն Ց Գ Ա Ր Ա Ն